Հավելված 7
«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6»

ք. Արթիկ «22» փետրվարի 2018թ.

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Յու. Ղազոյանի, որը գործում է <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

աճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորություն
ատևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն
յնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա
ա կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու
ր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է
մանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն քանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

...նորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
... Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս ...ած և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

...4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման ...թաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2432812,10 /երկու միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր տասներկու ամբողջ տաս հարյուրերորդական/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային

...մակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ...ությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով ...տեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների ...խտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ...թակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ թյամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

գնվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին որդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, անգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի րինեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր պը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ | « Նատալի Ֆարմ»ՍՊԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. |
| ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2 | ՀՎՀՀ 01222567 |

ՀՎՀՀ 06107489
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
հ/հ 2470400339430010
Տնօրեն՝ Յու. Ղազրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

« 22 »փետրվարի
«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6» ծածկագրով պայ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 1 | 33651111 | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ) 250մգ/5մ, օշարակ.22կ | Հենոֆարմ Սերբիա | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ) amoxicillin (amoxicillin trihydrate) դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի. 250մգ/5մլ / Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | հատ | 785 | 235500 | 300 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 300 | 2018թ. ընթացքում |
| 4 | 33661158 | Էպինեֆրինի հիդրոքլորիդ,լուծույթ ներարկման 1,82մգ/մլ, 1 մլ | Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ Ուկրաինա | Էպինեֆրինի հիդրոքլորիդ,լուծույթ ներարկման 1,82մգ/մլ, 1 մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 132 | 13200 | 100 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 100 | 2018թ. ընթացքում |
| 8 | 33611130 | Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) 1մգ/մլ, 1մլ | Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, 61013, p Ուկրաինա | Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) լուծույթ ներարկման 1մգ/մլ, 1մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 56,88 | 14220 | 250 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 250 | 2018թ. ընթացքում |
| 10 | 33661127 | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում),լուծույթ ներարկման 500մգ/մլ, 2մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստան | Մետամիզոլ(մետամիզոլ նատրիում),լուծույթ ներարկման 500մգ/մլ, 2մ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 31,15 | 171325 | 5500 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 5500 | 2018թ. ընթացքում |
| 12 | 33651112 | Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու | Լեկ Սլովենիա | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման | հատ | 1630 | 326000 | 200 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 200 | 2018թ. ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | (կալիումի քլավուլանատ) 250մգ/5մլ+62,5մգ/5մլ, ապակե շշիկ | | դեղափոշի 250մգ 5մլ+62,5մգ 5մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | | | | | | | |
| 14 | 33631210 | Բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), սալիցիլաթթու 0,64մգ/գ+30մգ/գ, 15գ, 30գ ալյումինե պարկուճ | Կիմնդպրեպարատ ԲԲԸ Ուկրաինա | Բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), սալիցիլաթթու 0,64մգ/գ+30մգ/գ, 15գ, 30գ ալյումինե պարկուճ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | հատ | 897 | 89700 | 100 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 100 | 2018թ. ընթացքում |
| 20 | 33620000 | Գանցիկլոն 1.5% 2 մլ | ՀՀ ԳԱԱ Օրգանական և Դեղագործական Քիմիայի Գիտատեխն. Հայաստան | Գանցիկլոն 1.5% 2 մլ /Գանցիֆեն/ լուծույթ ներարկման Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 255.92 | 12796 | 50 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 50 | 2018թ. ընթացքում |
| 22 | 33600000 | Դեքստրոզ լուծույթ ներարկման 400մգ/մլ 5մլ | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստան | Դեքստրոզ լուծույթ ներարկման 400մգ/մլ 5մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 34.25 | 41100 | 1200 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 1200 | 2018թ. ընթացքում |
| 23 | 33661136 | Դիազեպամ 10մգ/2մլ, 2 մլ | ԽԴՀ Զդորովյե նարոդու ՍՊԸ, Մեյնիկովի փ., 41, Խարկ Ուկրաինա | Դիազեպամ diazepam լուծույթ ներարկման 10մգ/2մլ, 2մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 76 | 15200 | 200 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 200 | 2018թ. ընթացքում |
| 29 | 33631360 | Սուքսամեթոնիումի յոդիդ 20մգ/մլ, 5մլ | Բելմեդպրեպարատ-ներ ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիցիուսա Բելառուս | Սուքսամեթոնիում suxamethonium լուծույթ ն/ե ներարկման 20մգ/մլ, 5մլ ամպուլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 268 | 21440 | 80 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 80 | 2018թ. ընթացքում |
| 30 | 33661153 | Դեքսամեթազոն 4մգ/մլ, 1մլ | Լեկխիմ-Խարկով ԲԸ 36, 17-րդ Պարտիզանսկայա փ., 61115 Խ Ուկրաինա | Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 52.88 | 95184 | 1800 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա և 2 | 1800 | 2018թ. ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) 50մգ, | Հեմոֆարմ ՍՊԸ, 249030, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62 Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 50մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | դեղահատ | 14.5 | 50750 | 3500 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 3500 | |
| 33 | 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) 25մգ/մլ, 3 մլ | Հեմոֆարմ ՍՊԸ, 249030, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62 Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 81 | 12150 | 150 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 150 | 2018թ. ընթացքում |
| 34 | 33671130 | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1 մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստան | Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 21.69 | 119295 | 5500 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 5500 | 2018թ. ընթացքում |
| 36 | 33661113 | Թիոպենտալ(թիոպենտալ նատրիում)1000մգ | Կիևմեդպրեպարատ ՀԲԸ, 01032, Կիև, Սակսագանսկոգո փ., 139 Ուկրաինա | Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի, 1000մգ, Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 2281.5 | 114075 | 50 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 50 | 2018թ. ընթացքում |
| 37 | 33671114 | Ամինոֆիլին լուծույթ ներարկման 24մգ/մլ,5մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստան | Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 37.37 | 37370 | 1000 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 1000 | 2018թ. ընթացքում |
| 39 | 33621520 | Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) 10 մգ | «Բորիսովյան բժշկական պատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան Բելառուս | Էնալապրիլ enalapril դեղահատ 10 մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | դեղահատ | 5.33 | 26650 | 5000 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 5000 | 2018թ. ընթացքում |
| 40 | 33621520 | Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ) 20 մգ | Հեմոֆարմ ՍՊԸ, 249030, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62 Սերբիա | Էնալապրիլ enalapril դեղահատ 20 մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | դեղահատ | 18.88 | 132160 | 7000 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 7000 | 2018թ. ընթացքում |
| 42 | 33691191 | Ֆոսֆոլիպիդներ (Էսենցիալ)-ԷՖԼ, 250մգ/5մլ, 5մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Ռոշինյան փ., 7/9 Հայաստան | Ֆոսֆոլիպիդներ (Էսենցիալ)-ԷՖԼ, 250մգ/5մլ, 5մլ, լուծույթ ներարկման, | սրվակ | 644 | 64400 | 100 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյան | 100 | 2018թ. ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | | | | | ն 2 | | |
| 44 | 33621730 | Վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 5մգ/2մլ, 2 մլ | Ալկալոիդ Մակեդոնիա | Վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 5մգ/2մլ, 2 մլ, լուծույթ ներարկման Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 585 | 17550 | 30 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 30 | 2018թ. ընթացքում |
| 45 | 33621730 | Վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 40մգ, | Ալկալոիդ ԱԴ-Սկոպյե Մակեդոնիա | Վերապամիլ verapamil դեղահատ 40մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | դեղահատ | 18.35 | 18350 | 1000 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 1000 | 2018թ. ընթացքում |
| 46 | 33661116 | Լիդոկաինի հիդրոքլորիդ 20մգ/մլ (20մլ), 20 մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 Հայաստան | Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 20մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 712.8 | 142560 | 200 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 200 | 2018թ. ընթացքում |
| 48 | 33611200 | Լոպերամիդ (լոպերամիդի հիդրոքլորիդ) 2մգ, | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան Բելառուս | Լոպերամիդ Loperamide դեղահատ 2մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | դեղահատ | 8.15 | 4075 | 500 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 500 | 2018թ. ընթացքում |
| 50 | 33600000 | Լոմիֆլոքսին 7.5մգ մեթիլուրացիլ 40մգ այուդին պարկուճ | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան Բելառուս | Լոմիֆլոքսին 7.5մգ մեթիլուրացիլ 40մգ այուդին պարկուճ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | հատ | 233 | 18640 | 80 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 80 | 2018թ. ընթացքում |
| 54 | 33621340 | Կոֆեին-նատրիումի բենզոատ,0.1գ/մլ 1մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստան | Կոֆեին նատրիումի բենզոատ caffeine-sodium benzoate լուծույթ ներարկման 0.1գ մգ մլ, 1մլ ամպուլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 31.14 | 3114 | 100 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 100 | 2018թ. ընթացքում |
| 55 | 33611420 | Կալցիումի գլյուկոնատ 100մգ/մլ, 5մլ | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, | Կալցիումի գլյուկոնատ calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ մլ, 5մլ ամպուլ | սրվակ | 70.99 | 85188 | 1200 | ԾՄ ք.Արթիկ Բաղրամյա | 1200 | 2018թ. ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կին, Բորիսպոլսկայա փ., 13 Ուկրաինա | Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | | | | | ն 2 | | |
| 57 | 33600000 | դինատրիումական աղենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ 10մգ+50մգ+0,5մգ+ 20մգ, 2մլ | Բիոֆարմ ԲԸ, 380060, Գոտուա փ. 3, Թբիլիսի Վրաստան | դինատրիումական աղենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ 10մգ+50մգ+0,5մգ+ 20մգ, 2մլ լուծույթ ներարկման Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 1942,67 | 58280.1 | 30 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 30 | 2018թ. ընթացքում |
| 58 | 33600000 | Կոկարբոքսիլազ (կոկարբոքսիլազի հիդրոքլորիդ)50մգ, | "ԲԻՈՖԱՐՄԱ" "ԴԳ" ՍՊԸ, 37, Կին փ., Բիլա Ցերկվա, 09100, Կին մարզ Ուկրաինա | Կոկարբոքսիլազ cocarboxylase դեղափոշի ներարկման լուծույթի 50մգ, ամպուլ+ 2մլ լուծիչ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 173 | 25950 | 150 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 150 | 2018թ. ընթացքում |
| 61 | 33621330 | Նիկեթամիդ,լուծույթ ներարկման 250մգ/մլ(2մլ),2մլ | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կին, Բորիսպոլսկայա փ., 13 Ուկրաինա | Նիկեթամիդ nikethamide լուծույթ ներարկման 250մգ/մլ, 2մլ ամպուլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 117,88 | 23576 | 200 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 200 | 2018թ. ընթացքում |
| 64 | 33141166 | Հեպարին , լուծույթ ներարկման 5000ՄՄ/1մլ 5մլ, | ԱՐԵՆդար Ուկրաինա | Հեպարին heparin (heparin sodium), լուծույթ ներարկման, 5000ՄՄ/1մլ, 5մլ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | սրվակ | 745 | 186250 | 250 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 250 | 2018թ. ընթացքում |
| 66 | 33621580 | Հիդրոքլորոթիազիդ 25մգ | "Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64 Բելոռուս | Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 25մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | դեղահատ | 11.21 | 5605 | 500 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 500 | 2018թ. ընթացքում |
| 70 | 33642220 | Մեթիլպրեդնիզոլոն 4մգ, | Պֆայզեր Իտալիա Ս.Ռ.Լ., Լոկալիտա Մարինո դել Տրոնտո 63100 Ասկոլի Պիցենո Իտալիա | Մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone դեղահատ 4մգ Համաձայն պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություն) | դեղահատ | 32,8 | 164000 | 5000 | ՇՄ ք.Արթիկ Բաղրամյա ն 2 | 5000 | 2018թ. ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 74 | 33621750 | Նիֆեդիպին 10մգ | Տեխնոլոգ ՓԲԸ, Մանուֆակտուրնայա փ. 8, 20300 Ուման, Չերկասի շրջան Ուկրաինա | Նիֆեդիպին Nifedipine դեղահատ 10 մգ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | դեղահատ | 13.89 | 41670 | 3000 | ՏՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 3000 | |
| 78 | 33611170 | Դրոտավերինի հիդրոքլորիդ, 40մգ/2մլ 2մլ | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ (64/27, Չապաևի փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան) Բելառուս | Դրոտավերին drotaverine լուծույթ ներարկման 40մգ/2մլ, 2մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 53.88 | 21552 | 400 | ՏՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 400 | 2018թ. ընթացքում |
| 80 | 33611380 | Նիկոտինաթթու 10մգ/մլ 1մլ | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13 Ուկրաինա | Նիկոտինաթթու 10մգ/մլ 1մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթություններ) | սրվակ | 79.79 | 23937 | 300 | ՏՄ ք.Արթիկ Բաղրամյան 2 | 300 | 2018թ. ընթացքում |

**Ծանոթություն**

*ա. 2,5 տարեկանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,*

*բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը.*

*գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհատական կյանքի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը.*

*դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:*

Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը, համապատասխան ՀՀ գնումների մասին օրենքի սահմանված պահանջների համապատասխան:

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ | « Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| ՀՎՀՀ 06107489 | ՀՎՀՀ 01222567 |
| Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ | Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/հ 2470400339430010 | Հ/Հ 1570005065330100 |
| Տնօրեն | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| ______ Յու. Ղազոյան (ստորագրություն) | ______ (ստորագրություն) |
| | Կ.Տ. |

*Հավելված N 3*
*« 22 »փետրվարի 2018 թ. կնքված*
*«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6» ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________________ և
կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 22 »փետրվարի 2018 թ. կնքված*
*«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը — Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ________________ | |
| Ստորագրություն | ստորագրություն |

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «_____» 02.2018թ.**

,, Նատալի Ֆարմ ՍՊԸ ,, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ասատուր Ասատրյանի/ նույնականացման քարտ՝ 007355209, տրված 010-ի կողմից 2016-03-09/
որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է « Արթիկի բժշկական կենտրոն » ՓԲԸ-ի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ << ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3>> ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ընկերության անվանումը
ՀՀ,ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ընկերության հասցե
,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
ընկերության սպասարկող բանկը
Հ/Հ 1570005065330100
ընկերության բանկային հաշվեհամարը
ՀՎՀՀ 01222567
Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը
Տնօրեն՝ Ա.Ասատրյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:
** լրացվում է մասնակցի կողմից

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ______ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ ՛ Նատալի Ֆարմ ՛ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ 'Ամերիաբանկ' ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570005065330100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01222567

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ « Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 06107489

10. Շահառուի բանկը՝ <<Արդշինբանկ >>

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ Հ/Հ 2470400339430010

12.Գումարը թվերով և բառերով՝ 243 281,21 / երկու հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր ութսունմեկ ամբողջ քսանմեկ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովման տուժանք

15.Պայմանագրի ծածկագիրը՝ N __ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝ --- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br><br>/______________/<br><br>/______________/ | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br><br>/______________/<br><br>/______________/ |
| 19.բ. Կ.Տ. | 18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br><br>20.ա. /______________/<br>/ստորագրություն/ | Կատարված է վճարողի բանկի կողմից<br><br>21.ա. /______________/<br>/ստորագրություն/ |
| 20.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| "___" ____20___թ. | 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

---

[1] Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## 22.02.2018ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6 ծածկագրովկնքված պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու մասին

ք. Արթիկ <<23>>փետրվարի 2018թ.

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Յ.Ղազոյանի, որըգործումէ<<Արթիկիբժշկականկենտրոն>>ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի,որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող»,մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6 գնման պայմանագրի 1.1և և8.13 կետերը,կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին հաստատել NԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6 գնման պայմանագրով նախատեսված ապրանքներիմատակարարման և դրանց դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/գնման ժամանակացույց/ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սույն համաձայնագրում չնշված NԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6 ծածկագրովգնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.3 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև կնքված NԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6 ծածկագրովգնման պայմանագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված էհայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| « Արթիկի բժշկական կենտրոն» | « Նատալի Ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Արթիկ, Բաղրամյան 2 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| ՀՎՀՀ 06107489 | ՀՎՀՀ 01222567 |
| Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արթիկի մ/ճ | Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2470400339430010 | Հ/Հ 1570005065330100 |
| Տնօրեն՝ Յ.Ղազոյան | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| ստորագրություն Կ.Տ | ստորագրություն |

Հավելված 1
Հաստատված է
«22» փետրվարի2018թ. կնքված
N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6
գնմանպայմանագրիփոփոխությամբ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | |
|---|---|
| **Գնման ժամանակացույց** | ՍույնպայմանագրինուժիմեջմտնելուօրվանիցհետոՊատվիրատուիցպատվերըստանալուցհետո 5 աշխատանքայինօրվաընթացում: |

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ<br>« Արթիկի բժշկական կենտրոն»<br>Հասցե՝ ք.Արթիկ, Բաղրամյան 2<br>ՀՎՀՀ 06107489<br>Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արթիկի մ/ճ<br>Հ/Հ 2470400339430010<br>Տնօրեն՝ Յ.Ղազոյան<br>ստորագրություն<br>Կ.Տ | ՎԱՃԱՌՈՂ<br>« Նատալի Ֆարմ»ՍՊԸ<br>Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2<br>ՀՎՀՀ 01222567<br>Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570005065330100<br>Տնօրեն՝ Ա.Ասատրյան<br>ստորագրություն |

Հավելված 2
Հաստատված է
«22» փետրվարի2018թ. կնքված
N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-6
գնմանպայմանագրիփոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | |
|---|---|
| Վճարմանժամկետը/վճարմանժամանակացույց | ՎճարումներնիրականացվելուենՊայմանագրիգործողությանշրջանակներում, յուրաքանչյուրամսվամինչև 15-րդբանկայինօրը,նախորդամսվաընթացքումփաստացիմատակարարվածապրանքների 100%-իչափով՝ Վաճառողիկողմիցհաստատվածններկայացվածհաշիվ-ապրանքագրերիևհաստատվածընդունման-հանձնմանարձանագրություններիհիմանվրա: |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| « Արթիկի բժշկական կենտրոն» | « Նատալի Ֆարմ»ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Արթիկ, Բաղրամյան 2 | Հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| ՀՎՀՀ 06107489 | ՀՎՀՀ 01222567 |
| Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արթիկի մ/ճ | Բանկ՝ « Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2470400339430010 | Հ/Հ 1570005065330100 |
| Տնօրեն՝ Յ.Ղազոյան | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ | |